

# ***Հաղթահարելով երիտասարդ կանանց նկատմամբ բռնությունը***

**Դասընթաց**

**Թբիլիսի, Վրաստան**

**Մայիսի 26-Հունիսի 1, 2010**

2010թ-ի մայիսի 26-ից հունիսի 1-ը ՔՀԶԿ կամավոր Արփինե Մաժինյանը մասնակցեց «Հաղթահարելով երիտասարդ կանանց նկատմամբ բռնությունը» դասընթացի երկրորդ մասին: Դրանից մեկ տարի առաջ տեղի էր ունեցել ԵԳԷՑ-ի (Երիտասարդական գործունեության էկումենիկ ցանց) կողմից կազմակերպված դասընթացի առաջին մասը, որի ժամանակ ՔՀԶԿ-ն ներկայացրել էին Նոնա Միսակյանը և Արփինե Մաժինյանը: Երկու դասընթացներն էլ տեղի են ունեցել Թբիլիսիում՝ Վրաստանում: Այս ծրագրին մասնակցում էին 18-30 տարեկան երիտասարդներ՝ մոտավորապես 10 երկրներից:



Դասընթացի երկրորդ մասում մասնակիցները տեղեկացան բռնության նոր տեսակներին, ինչպիսիք են օրինակ տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների միջոցով բռնությունը, ստացան նոր գիտելիքներ առնականության, հեզեմոնիայի, հայրության և հոգ տանելու մասին, տեղեկատվություն ստացան երիտասարդության շրջանում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, համասեռամոլության և նման մարդկանց նկատմամբ խտրականության ու հոմոֆոբիայի թեմաներով: Բռնության գոհերի և հանցագործների հետ աշխատելու հմտություններ ձեռք բերելու համար կազմակերպվեցին մի շարք խաղեր:



Կազմակերպվեցին խմբային քննարկումներ՝ յուրաքանչյուր երկրում բռնության իրավիճակային վերլուծության վերաբերյալ: Մա յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն տվեց ներկայացնելու սեփական երկրում առկա գենդերային խնդիրները և ստանալ այդ թեմայով տեղեկատվություն այլ երկրների մասնակիցներից: Բացի այդ քննարկվեց նաև տարբեր կազմակերպությունների փորձը:

Ավելին, մասնակիցները հնարավորություն ունեցան անցկացնել մեկ օր Վրաստանի ամենագեղեցիկ քաղաքներից մեկում և ծանոթանալ վրացական մշակույթին: ՔՀԶԿ-ը շնորհակալ է ԵԳԷՅ խմբին այս արդյունավետ միջոցառումը կազմակերպելու համար:

***Արփինե Մաժինյանը***